գալստեան խօյեցւոց և նախչուանցւոցն յերկիրս Երևանու, և վնասուցն զոր անցուցին ընդ սա և ընդ սուրբ Աթոռս» և բացառապես նվիրված է 1790 թ. Խոյի, Նախիջևանի և Երևանի խանությունների միջև տեղի ունեցած զինված ընդհարումների նկարագրությանը։ Սա փաստորեն ոչ թե նամակ է, այլ պատմական մի փոքրիկ և ամբողջական երկասիրություն, որը զարմանալի պարզությամբ, սեղմ և համառոտ ոճով վեր է հանում ֆեոդալական կիսանկախ այդ իշխանությունների միջև տեղի ունեցած բազմաթիվ արյունալի ընդհարումներից մեկի պատմությունը։ Այն ցույց է տալիս, թե ինչպես արշավող զորքերը փոխադարձաբար ավերում էին իրենց հակառակորդ երկրի գյուղերը, թալանում ու հրկիզում տները, ոչնչացնում ամեն ինչ, և թե ինչ աստիճան թշվառ ու ողբերգական վիճակի մեջ էր գտնվում Արևելյան Հայաստանի բնակչությունը մի առավել ահավոր ավերմունքից՝ Իրանի նոր միապետի՝ Աղա-Մուհամադ խանի արշավանքից մի քանի տարի առաջ։ «Պատմութեան» մեջ գրանցված տեղեկությունները պերճախոս վկայություն են այն ծայր աստիճան հուսահատ կացության, որի մեջ տվայտում էր պարսից բարբարոս տիրապետության լծի տակ գտնվող աշխատավոր ժողովուրդը՝ Արևելյան Հայաստանը Ռուսական Կայսրությանը միացնելու նախօրյակին։ Ուշագրավ են հատկապես «Պատմութեան» այն տողերը, ուր խոսվում է էջմիածնում ստեղծված տագնապալի վիճակի, արշավող զորքերի հրամանատարների ու Երևանի խանի կողմից Ղուկաս կաթողիկոսին արված իրարամերժ առաջարկությունների, արշավանքի կապակցությամբ վրաց թագավոր Հերակլ II-ի կողմից Երևանի խանին զինված օգնություն ցույց տալու մասին։ Ղուկաս Կարնեցու այս երկասիրությունը վերոհիշյալ դեպքերի մասին առայժմ հայտնի, միակ և, հարկ է նշել, չափազանց վստահելի սկզբնաղբյուրն է։

Խոյեցիների ու նախիջևանցիների հարձակումը Երևանյան երկրի վրա կատարվեց ի պատասխան Երևանի Մուհամադ խանի՝ Խոյի վրա կատարած այն արշավանքի, որ տեղի էր ունեցել նույն թվականի մայիսի 10-ից մինչև հուլիսի 7-ը ընկած ժամանակաշրջանում։ Սրա պատճառներից մեկը այն օգնությունն էր, որ թուրքաց սուլթանի հատուկ հովանավորությունը վայելող Խոյի խանը գաղտնի կերպով ցույց էր տվել Բայազետի Իսհակ փաշային, երբ վերջինս 1787—1789 թթ. կռվի էր բռնվել Ռուսական Կայսրության հովանավորությունն ընդունած Հերակլ II-ի հարկատու Երևանի խանի հետ[2]։ Պատճառներից մյուսը, որը և հարձակման անմիջական առիթը հանդիսացավ, հետևյալն էր. Խոյի խանը անհիմն պատճառաբանություններով հրաժարվում էր ետ ուղարկել Երևանի խանին պատկանող թանկարժեք մի շարք իրեր, որ պահ էին տրված Խոյում[3]։ Երևանցիները և նրանց դաշնակից Նախիջևանի Քյալբալի խանի զորքը հարձակվում են Խոյի վրա, գրավում քաղաքը և պաշարում բերդը։ Ստանալով այդ իրերը, նրանք վերադառնում են ետ[4]։ Դրանից հետո Խոյի խանը փոխվրեժի է դիմում, հավաքում է իր ուժերը, գրավում իր կողմը Քյալբալի խանին և նրա հետ միասին արշավում դեպի Երևան։ Ահա այս արշավանքի ողջ ընթացքը ամենայն մանրամասնությամբ նկարագրված է Ղուկասի «Պատմութեան» մեջ։

---

2 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 283ա։

3 Նույն տեղում, էջ 283ա—բ։

4 Նույն տեղում, էջ 283ա—բ։